

տանք ունի , ոչ ստակի ծախքի կը կարօտի , և ոչ ալ հնարագէտ ճարտար մարդիկներու հարկաւորութիւն ունի . այլ միայն կը պահանջէ ճանաչմունք այս ախտին անհնարին վնասակարութեանը , և ջանք՝ ախտէն հեռու կենալու : Ի այց թէ ինչպէս դժուարաբոյժ կ'ըլլայ այսպիսի ախտ մը , զորն որ միայն ճանչնալով և իրմէն հեռու կենալով կրնայ կորսուիլ ու ջնջուիլ , դժուարաբոյժ ըլլալուն պատճառն է այս ատելութեան ախտին ծածուկ բանիլը : Այս ախտը սրտերուն խորը ծածկուած աներեւոյթ բունեալ է , և իր ամէն վնասակարութիւնները կ'ազդէ , կը

ներգործէ ազգին անդամներուն վրայ՝ ամենեւին առանց երեւնալու և ճանչցուելու . այնպէս որ շատ մարդիկ կարծեն թէ իրենք ազատ են այս ախտէն և առանց անդրադառնալու չարաչար կը տանջուին ախտին ձեռքէն . և այնպէս ազգը կը հիւժի , կը մաշի , կը տագնապի , և պատճառը չկրնար իմանալ : Իսկ լսր ազգը մէկտեղ կ'աշխատին կը յոգնին , և ամէն ջանքերնին պարապի կ'երթայ : Ամենեւին նման մէկ հիւանդի մը , որուն հիւանդութիւնը չճանչնալով բժիշկները , ընդունայն գեղերով կը տանջեն զհիւանդը :

(ԳՒՏԻ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Հին Պարտեզներու վրայ :

Յորմէ հետէ զիտաց մարդ նրաճել զանդ ընդ արօր՝
 Ըզգեղեցիկս ի վայրաց բեր ի պաճոյճ նորանոր .
 Եւ հուպ աչացն եւ խնամոց ընդ օրինովք իւր էարկ
 Որ ինչ յաւէտ սիրելիք ընծայեցան տունկք եւ ծառք :
 Անփառասէրն Աղկինեայ դեռ անպաճոյճ ջան եւ կրօն
 Մըրգաստանաց գայր ի գարդ : Անդուստ գոռոզ Բաբելոն
 Վըսեմագոյն արուեստիւ ըզգրախտս յայեր բարձրացոյց :
 Իսկ երբ Հռոմայ ընդ աշխարհ արձակեցաւ երկաթ լուծ ,
 Յաղթողք ի դրախտս հոյակապ յաղթանակօք գեղապար
 Քնացին ըզչանթ խաղաղել եւ կամ փառաց տալ դադար .
 Իմաստութիւն գառաջինն ի բուրաստանսն օթէր
 Եւ քաղցրախառն ի տարազ զմարդիկ յուսումն կրթէր .
 Եւ Եղիսեանքն զոր զիք պարգեւէին իմաստնոց
 Ոչ արբունիք ինչ էին , այլ անտառակք եւ ծաղկոց .
 Մարգագետինք դալարի , քաղցր հաճոյից բնատեղիք ,
 Ուր ի հանգիստ ընդ երկար վայելէին հեշտալիք :

ՏԸԼԻԼ ԲՈՒՐԱՍՏԱՆԻ , ԵՐԳ Ա . 31-46 :

Պարտիզի անունը միայն կը զուարթացնէ զմարդ և իրեն կը յափշտակէ , զորն որ նախնիք ալ մեծ փութով և ախորժով կը ինամէին : Յայտնի են ամենուն բոլոր Բսիոյ պալատները , որ իրենց չորս կողմը և կամ տանեաց վրան հովանաւոր ծառերով , անուշահոտ և գեղեցիկ ծաղկըներով , ցայտող ջրերով , զալարիներով , արհեստաշէն այրերով ,

տարփինաներով , վերջապէս բնութեան ամենայն գեղեցկութեամբը զարդարուած զուարճալի տեղուանք ունէին : Եւ Բստուած ալ զնախաճնողս զուարճալի պարտիզի մը մէջ զնելով՝ կարծես թէ յորդոր կու տայ մարդիան այս անմեղ և քաղցր զբօսանաց ետեւէ ըլլալ բնութիւնն ալ մէկ գիէն՝ ի նոյն կը ստիպէ զմեզ . վասն զի ինչ բան կրնայ մէկ

յոգնած դադրած հոգւոյ մը զուար-
թութիւն տալ պարտիզէ զատ , ուր որ
այն պզտի տեղւոյն մէջ բոլոր բնութե-
գեղեցիկութիւնները հաւաքուած մէկ-
տեղ կը տեսնէ : Յաջողութեանց մէջ
ինչ աւելի սիրելի բան կրնայ ըլլալ՝ քան
թէ չորս կողմը ծառեր , ծաղկերներ
տեսնել , որ կարծես թէ իրեն հետ
խնդարով ուրախակից կ'ըլլան : Այնպէս
ձախորդութեանց մէջն ալ ինչ բան
կրնայ իր այն արտում տխուր երեսը
զուարթացընել և իր սրտին առջի խա-
ղաղութիւնը տալ : Հոն բնութիւնը
մաքուր , անոյշ օդ կը ծծէ , հոտառու-
թեան և աչաց ջիղերը կը կենդանա-
նան , միտքն ալ նոր զօրութիւն մը ա-
ռած կ'ուժոյնայ : Բանաստեղծից աչ-
խոյժն այն խաղաղ և ազդու տեսարան-
ները աւելի կը վառեն , ինչպէս նաև
փորձով ալ յայտնի է որ շատ բանա-
ստեղծք իրենց անմահ տողերը պարտի-
զի մէջ ստեղծեցին . նմանապէս փիլի-
սոփայից խոր մտածութեանցը համար
ալ շատ օգտակար է , ինչպէս որ Աթե-
նայ ճեմարաններուն պարտէզները կը
հաւաստեն խօսքերնիս : Բոլոր գեղե-
րու քաղաքներու առաջին զարգն է , ուր
թագաւորք և իշխանազունք ամէն ի-
րենց ձոխութիւնը կը թափեն անոր
գեղեցիկութեան և փառաւորութեան :
Սկսելով ուրեմն այս զբօսեցուցիչ և
զուարճալի նիւթիս վրայ խօսիլ՝ յի-
շենք Աքամէն սկսեալ հնոց երևելի
պարտէզները : Սուրբ Գիւրքը նախ
դրախտին ազուր նկարագիրը կ'ընէ ,
ուր որ Աստուած դրաւ մեր նախա-
ճնողքը : Չորս այլ և այլ կարկաջա-
հոս գետեր կը բղխէին անկէց , հոն
ամենայն տեսքը գեղեցիկ , ճաշակին
քաղցր և հովանաստուեր ծառեր , ամէն
գիւղական զուարճութիւնները կային ,
զորն որ Սուրբ Գիւրքը համառօտ խօս-
քով կը լինցընէ ըսելով . « Աւ բուսոյց
» Տեր Աստուած զամենայն ծառ գե-
» ղեցիկ 'ի տեսանել և քաղցր 'ի կերաւ
» կուր » : Աքամէն ետքը մասնաւորա-
պէս Այոյն վրայ յիշատակութիւն կայ
որ պարտէզ մշակած ըլլայ . վասն զի

« Ահաւ Այոյ այր հողագործ զերկիր
» գործել , և տնկեաց այգի » կ'ըսէ Աթ
Գիւրքը : Այնպէս Սողոմոնի փառաւոր
պարտէզներուն վրայ երկար կը խօսի ,
որոնք լի էին պտղատու ծառերով , տուն-
կերով և ծաղկերներով : Աւտի ինչպէս
որ կը տեսնենք ջրհեղեղէն ետքը անմի-
ջապէս Այոյն սկսեալ մարդկանց առա-
ջին զբաղմունքը այս եղաւ . և առ սակաւ
սակաւ մարդկութիւնը բազմանալով ա-
ռաջ գնաց այս զբօսալի պարապմունքը :
Աւ ինչպէս որ բնական կ'երևնայ , սկսան
նախ իրենց հիւղերուն քովերը խոտե-
ղէններ սերմանել , այգիներ տնկել , ի-
րենց ուտելու պարէնը ճարելու համար :
Ամաց կամաց օրիորդք և տղաք՝ որով
հետև բնութեամբ զարգարուիլ կը սի-
րեն՝ տեսնելով բնութեան գեղեցիկ
գեղեցիկ ծաղկերները , սկսան անոնցմով
զարգարուիլ . անոր համար ալ խնամով
կը հոգային աճեցընելու զանոնք . ար-
տերուն մէջտեղերէն առուակներ կը
բանային զանոնք ոռոգանելու համար .
և որպէս զի կենդանիք և ուղևորք չեղ-
ծանէն չսպականէն , ցանկով կը պա-
տէին . ետքը ետքը սկսան խրամ բանալ ,
և վերջապէս որմով մը շրջապատեցին
զանիկայ : Ատքը սկսելով ընդարձակել
միջոցը՝ պզտի ճամբաներ բացին քա-
լելու համար , և ամենազգի գեղեցիկ
տեսքով՝ հովանաւոր և պտղատու ծա-
ռեր տնկեցին : Աջբիւրներ , մամուսպատ
աթուակներ , սարփինաններ , զովագին
այրեր անոնց գլխաւոր զարդերն էին :
Այսպէս սկսան ծաղկիլ և զարգանալ
պարտէզները և դարաստանները մարդ-
կութեան սկիզբը :

Հնոց մէջ երևելի էր մասնաւորապէս
Բաբելոնի կախաղանաւոր բուրաստան-
ները , որոնց վրայ առանձին հատուա-
ծով խօսած ենք Բազմավիպիս մէջ :
Յանկալի է մեզի այդ Ասորեստանեայց
մեծագործութեանը կրկին յիշատակու-
թիւն մը տալ . անոր համար կը դնենք
հոս ՍՐՈՒՐԻ ՈՐԾՁԴԱՆԱՅ Բարաս-
տանք քերթուածէն Ամիրամայ պար-
տիզին գեղեցիկ նկարագիրը .

1 Տես հատ . է . 263 :

Ընդ սարաւանդ Լեւկադեան չէ հարկ ի բոյժ տարփից վազել .
 Բամբիչն ասորնական ոչ Արայէզ բուժեալ դիովք ,
 Եւ ոչ յուռթից բըժժանօք ի դիւցազինըն տըռփանաց ,
 Բարձրաբերձ կախէ պարտէզ ի յամբարտակըս կոփածոյս .
 Քառեակ գիրերօք յառննն ի թռիչս աստիճանեալ
 Պատուարք վիմակուռք , զոյց շուրջ Եփրատ թանայ ստորոտ :
 Կան անտառք օղակառոյցք , ծաղկեն յայերըս բուրաստանք ,
 Եւ յերկնապիչ շատրրուանաց անհատահոս ցայտեն բրխմունք .
 Անդ արուեստ յաղթէ բնութեան , եւ զետն ի սաստ ջրարուղիս ուրդից
 Անդ ի զնացիցն արտուղի վերելակեալ աղբերանայ :

ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԳԻՐԷ Դ . 121-130 :

Հին ատենէ ՚ի վեր Բսորիք և Փռիւ-
 գացիք ալ դարաստաններ մշակելու և
 դարմանելու խիստ ետևէ էին : Հերո-
 դոտոս Սիդասին երևելի պարտէզնե-
 բուն վրայ խօսելով՝ կ'ըսէ թէ խիստ
 գեղեցիկ վարդեր կ'աճէին հոն տեղս ,

ախորժելի անուշահոտութիւն մը բու-
 ըրելով : Բայց խիստ հին և աւելի յիշա-
 տակաց արժանին է Փէակեանց Բջկի-
 նոս թագաւորին պարտէզը զորն որ կը
 յիշէ հոմերոս իր Ողիսական դիւցազն-
 երգութեանը մէջ .

Իսկ արտաքոյ մերձ յարբունիս էր մեծ պարտէզ սխրալի՝
 Չորս լըծավար , եւ ցանգ ամուր շուրջանակի բուրբի .
 Ծառք բարձրուղէչք , դալարաղեղք . աճէր անդ նուռն եւ տանձիք ,
 Խնձորք չքնաղք , եւ թուզք քաղցունք , եւ քաջատունկ ձիթենիք .
 Յաւերժաբար պըտուղ նոցա ոչ նըւազէ , ոչ ծնդի ,
 Ոչ ձմերանի , ոչ յամառան . ցանգ զեփիւռ կայ հովանի ,
 Շնչէ անդուլ , ըզկէսս եփէ , ըզկէսս առնէ աճեցուն :
 Ըզկնի տանձոյն տանձ ձերանայ , խնձորն ըզկնի խնձորոյն .
 Ըզհետ խաղող գայ խաղողոյն , թըզոյն դարձեալ թուզն ըզհետ ,
 Եւ կայ անդէն բազմապըտուղ տնկեալ այգի զինեւէտ .
 Կէս զողկուզացն յարեզունիսըն ցամաքէ շող արփեան ,
 Ըզկէս պահեն ի յայգեկութ , ըզկէս կոխեն ի հնձան .
 Որք ի ծաղկին աղոխացեալք , եւ որք հասեալք եւ խայծին :
 Բայց երփներանգ մշակեալ ածուք կան ի դրախտին ծագ վերջին
 Մշտածաղիկք գունակ գունակ . իսկ եւ աղբիւք են կրկին ,
 Մին ծաւալի ողջ ընդ պարտէզ , մին ընդ ատակըն գաւթին ,
 Հոսէ զընայ մինչ յապարանսն , անտի մարդիկ ջուր առնուն .
 Այսպէս աստուածքն յարդարեցին զԱղկինոսին պերճ ըզտուն :

ՈՒՒՍԱԿԱՆ , Հագներգ . Է . 81-98 :

Ուստի կը տեսնենք որ Բջկինոսին
 պարտէզը պտղատու ծառերով , այ-
 գիով , ծաղկալից դարաստանով , ջրերով
 և շատրուաններով զարդարուած էր .
 որուն շրջապատը կենդանի մացառներ
 տնկած էին որ բոլոր պալատը իր մէջը
 կ'առնէր : Այսպիսի շինուած պարտէզ
 մը թէպէտ այնչափ ընդարձակ ալ չըլ-
 լայ , բայց այս օրուան օրս փառաւոր
 թագաւորական պարտէզ մը կրնայ ըլ-
 լալ . մանաւանդ որ իր մէջի լեցուն պըտ-
 ղատու ծառերովը շատ աւելի գեղեցիկ
 կրնայ ըլլալ՝ քան թէ հիմակուան Ալ-
 բուստի պարզ անկենդան ծառեր տնկե-

լովը : Պէտք է գիտնալ հոս տեղս որ
 հոմերոս Բրիստոսի թուականէն 884
 տարի առաջ ծնած է , ինչպէս որ կ'ըսէ
 Աարշէ , և իր նկարած Փէակեանց թա-
 գաւորին պարտէզը իրմէ 300 տարի ա-
 ռաջ է , որով կ'իմացուի այս պարտիզիս
 հնութիւնը : Եւ այն բանաստեղծն իր
 նոյն գործքին մէջ կը ստորագրէ նաև
 Ալալիփսեայ այրը , որ կ'ազամասխներով ,
 նոճիներով պատած էր , որ թերով զար-
 դարուած , միանգամայն աղբիւրներով
 լեցուն .

Մայրք դիրահերձք եւ խնկենիք այրեալք բուրեն ընդ կղզին , . .
 Անտառ բուսեալ ըզքարայրին ի շուրջ պատէր դալարի ,
 Անտառ սօսեաց , եւ կաղամախ , անուշահոտ եւ նոճի .
 Բոյնս ի նոսա լայնաթեւեան թռչունք եղեալ դարէին ,
 Բութ եւ բաղէք , նա եւ սակուր լայնալեզուք ծովային ,
 Չքօսանս ծովուն խայտան սոքա . բայց անդանօր եւ այգի
 Յորթ նորատունկ ողկուզալից յանձան ողջոյն բոլորի .
 Անդ եւ աղբիւրք բխեալ հոսեն ականակիտ ջուր յստակ ,
 Մօտ առ միմեանս բաշխին յառաջս , եւ են ի թիւ ի քառեակ .
 Մարգ փափկութեան մանուշակաց , դալարագուարճ եւ նեխուր .
 Ար եւ Անմահ դք անդ հասեալ յակճիւրս կայր եւ գքօսնոյր :

Գիրք Ե . 43-54 :

Պարսից թագաւորներն ալ ինչպէս յաղթութեանց , քաջութեանց , այսպէս պարտէզներու կողմանէ ալ կ'ուզէին անուն ձգել . նոյնպէս իրենց նախարարները թագաւորին նման իրենց վարչութեան տակ եղած երկիրներուն մէջ երևելի պարտէզներ կը շինէին . զասոնք պատով կը պատէին ու մէջը ամէն տեսակ կենդանիներ ալ կը մեծցընէին որ սորդութեան համար : Վսենոփոն իր նահանջ Բիւրոն ըստուած պատմութեան մէջ շատ տեղ յիշատակութիւն կ'ընէ Պարսից պարտէզներուն վրայ , ինչպէս նաև Փառնաբազ նախարարին շինած պարտէզներուն գեղեցկութեանը վրայ երկար կը խօսի . բայց արևելեան պարտէզները անհամեմատ վեր են քան զՆունացը և քան զամէն ազգացը , անանկ որ անոնց գեղեցկութեանը , մեծութեանը և փառաւորութեանը համեմատ ուրիշ տեղ չգտնուիր հին պատմութեանց մէջ , ինչուան հուովմայեցոց հասարակապետութեան վերջի տարիները :— Չինաց ազգն ալ նմանապէս շատ հին ժամանակներէն սկսեալ իրենց պարտէզները լայն պատերով , բլուրներով , լեռներով և լճերով կը զարդարեն , հարթայատակ տեղերը փոսեր կը բանան , բլուրներ կը ձևացընեն , պալատներով ու զուարճալի շինուածքներով կը զարդարեն և չորս կողմը ընտիր ծառեր և ծաղկըներ կը տրնկեն : Որոնց ճարտարապետութիւնը պարզութեան հետ գեղեցկութիւն ալ ունի . այն գունաւոր յախճապակիները և նկարած տախտակները՝ իրենց ա-

ղուոր տեսքովը ու զուարթ և գոյնզգոյն զանազանութիւններովը մեծ զարդ են անոնց : Այս զուարթագին տեսարաններուն դիմաց ահաւոր տեսարաններ կը ձևացընեն , բարձր գահալէժներ , նսեմ ու ժայռուտ լեռներ , և այնպիսի տեղուանք այրեր և անդունդներ կը փորեն , որոնց բոլորտիքը ծաղկեալ դաշտեր և պարտէզներ են : Աղբիւրները և վտակները կանաչներուն և ծաղկըներուն մէջէն անցնելով՝ սահանքներ , լճակներ և ծոցեր կը ձևացընեն . այն ճամբաները որ դարձուգարձ կ'իջնան բլրակներուն վրայէն ետևէ ետև՝ զարմանալի զանազան տեսարաններ կը ներկայացընեն աչաց , և այն տունկերը իրենց զանազան ձևերովը , հասակներովը և գուններովը իրենց տեղոյն մէջ խիստ լաւ կը յարմարցընեն : Այլ իրենց պարտէզներուն ընդհանուր սկիզբըն է՝ բնութեան անհուն զանազանութիւնները մէկտեղ բերել , իւրաքանչիւրին իր բնիկ յատկութիւնը պահելով . և իրենց վարպետութիւնը կ'երևայ պզտիկութեան մէջ բնութեան ընդարձակութեան արդիւնքը երևցընել . անոր համար ամենևին երկիրը հարթ հաւասար չեն ըներ , փոսերը ջրանցքները առանց զուգահեռականութեան , ծառերն ու ճամբաները առանց կարգի : Այս է ահա Չինաց արտօրժալը որ մինչև հիմա կը տևէ :

Յոյնք ալ ունէին իրենց պարտէզները , ծաղկանոցները : Արևայ թէ Ապիկուրոս առաջինը եղած ըլլայ որ Աթենայ մէջ իր փիլիսոփայութեան դա-

սերը պարտիզի մէջ կու տար, որ և խիստ շատ առաջ տարաւ պարտէզ մշակելը . ինչպէս նաև Սետրոգորոս, որոնք մեծ գովեստից արժանի են : Պղատոնին ճեմարանն ալ պարտէզ մըն էր, ուր որ իր խոր փիլիսոփայութիւնը կը սովորեցընէր : Վմանապէս իրենց կրթարանները կը զարգարէին պարտէզներով և ասպարէզներով, ուր որ պատանիք կը կըրթուէին ամէն տեսակ ըմբշամարտական և գօտեմարտական խաղերու մէջ : Հոն դարձեալ դերասանաց և միանգամայն հանդիսականաց համար մասնաւոր տեղ մը որոշուած էր, որպէս զի օդուն սաստիկ տաքութենէն պատսպարան մը ունենան : Սպարտայի կրթարանին մէկ կողմը սօսի ծառերով զարդարուած ըլլալուն՝ այն տեղը Սօսային կը կոչուէր :

Պարտէզներուն վրայ խօսելու ատեն կրնանք նաև պզտի յիշատակութիւն մ'ալ Սրբազան անտառներուն վրայօք ընել որոնք խիստ գերազանց էին : Վուկիանոս՝ կնիդէայ մէջի Մտղիկ աստուածուհւոյն տաճարին սրբազան անտառին ստորագրութիւնը ընելով՝ մէկիկ մէկիկ բուսոց տեսակները կը հաշուէ, որոնցմէ ոմանք միտի և դափնի ծառերուն պէս միշտ կանաչ են կ'ըսէ . ոմանք ամենագեղեցիկ ծաղկընէրով զարդարուած, իսկ ոմանք պտղալից ճիւղերով . ամենքն ալ այնպէս գեղեցիկ կարգով և զանազան տեսակներով արհեստի բերուած, որ չորս կողմէն կատարեալ կրկէս մը ձևացած էր : Արոնդէս գետին վրայ շէնուած Ղափնէի անտառն ալ շատ փառաւոր պարտէզ մըն էր, ինչպէս որ կը յիշեն Ստրաբոն, Սիբանիոս և Սոզոմենոս . որուն նոր հեղինակ մը այսպէս ստորագրութիւնը կ'ընէ . «Մտիոք քաղաքէն հինգ մղոն հեռու Մտրուոց մակեդոնացի թագաւորները նուիրած էին Մտղոնին պաշտամանը այնպիսի փառաւոր տեղ մը, որ քիչերէն մէկն էր կուսապաշտութեան մեծագործութեանց մէջ : Հոն հոյակապ տաճար մը կառուցած էր լուսոյ աստուծոյն, և իր հըսկայաձև արձանը կանգնած կար տաճարին վերին ընդարձակ խորանին մէջ, որ

ուկուով և ակունքներով ճոխ և յոյն ճարտարապետաց գեղեցիկ արուեստովը զարդարուած էր : Հունաստանի արարողութիւններուն նմանութիւնները առած էր Մտրուոց եկամուտ արքունի տոհմը : Ղափնէի կատապեան աղբերէն կը հոսէր մարգարէական ջուր մը նախանձորդ Ղաղփեայ ջրոյն : Աղիտեայ յիշատակը կենդանացընելու համար դաշտ մը կը տեսնես հոն, ասպարէզ մը լայն, նոր ողիմպական խաղերու մրցանաց համար, որ ամէն տարի կը խաղցուէին, որոնց համար 15 տաղանդ կը գործածուէր : Հանապազօրեան բազմութիւնը տաճարը դիմելովը կենդանացուց Ղափնէի փառաւոր և բազմամարդ գեղը : Տաճարը և գեղը հիմնուած էր դափնիի և նոճիի անտառի մը խորը, որուն շրջապատն էր 12 մղոն, և մութ ստուերով մը ամառուան տաքութէն կը պաշտպանուէր : Բազմութիւ պայծառ և անոյշ ջրերու առուակներ կը բղխէին բլուրներէ և բարձրաւանդակներէ երկրին կանաչութիւնը ոռոգանելու համար, և օդին անոյշ բարեխառնութիւնը զմարդ կը յափշտակէր . այն ներդաշնակ ձայներն և բուրման անուշահոտութիւնները և այն լուռ անտառը սիրոյ և զուարճութեան նուիրուած էր : Օրականը և փիլիսոփան պէտք էր փախչէին այս նիւթական Աղիսեան դաշտէն, ուր մեղի զուարճութիւնները զմարդիկ կը խաբէին, ու անոնց այրական զօրութիւնն կը թուլցընէին : Օրհերու հանդէսները, նուէրները, խունկերը, տղոց և աղջրկանց երկար թափօրները՝ վառնին սպիտակ զգեստներ ձգած, անթիւ ժողովրդեան աղմկալից բազմութիւնը՝ աւելի ևս սիրելի կ'ընէին տեղոյն գեղեցկութիւնը և ջրոց առատութիւնը : Մտղիկան, Փլորայի, Սուսայից և Հաւերթհարանց, և այլն սրբազան անտառները ընդարձակ փառաւոր պարտէզներ էին, ինչպէս նաև իրենց տաճարներուն ճարտարապետութիւնն ալ համաձայն էր այն աստուածուհեաց կարծեցեալ գեղեցկութեանը : Բնա-

կան պարտէզ մըն էր Տեմպեայ հո-
վիտը (Թեոսաղիոյ մէջ, խիստ երեւելի,
զորն որ Ողիմպոս, Սոսա և Պեղիոն
լեռները կը պատէին, և ուսկից որ կ'ըն-
թանար Պենէոն գետը, և մշտադա-
ւար անտառ մը միշտ հովանի կ'ընէր ա-
նոր վրայ, և Մարդոնի բազինը մարգով
ծածկուած էր, և կ'ըսուէր թէ հոն
մշակուած է դափնին: Այն իսկ աս-
տուածները հնոց ըսածին նայելով Տեմ-
պեայ ձորը կու գային զբօսելու համար.
վասն զի տեղւոյն ընդարձակութիւնը,
հովանիներուն զովութիւնը և օդոյն
քաղցրութիւնը բոլոր աշխարհիս ամէն
գեղեցկութիւններէն աւելի ախորժելի
կ'ընէր զանիկայ: Ուրիշ ասոնց նման
նուիրեալ անտառներուն վրայօք հին
պատմիչներ մեզի յիշատակութիւններ
թողուցած են, զորոնք համառօտու-
թեան համար զանց կ'առնենք յիշատա-
կելու. թէպէտ և մեծագոյն մասն ալ
կորսուած է այն հեղինակներուն:

(ԳՐԻՏ ԸՅՐՈՒՆԱԿՈՒՒ)

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿՈՒԾՈՒԹԻՒՆ

Գ.

Կարգման կազմարանք²: (Երես 74)

1. Ինչպէս առջի յօդուածով տե-
սանք, կարվանսաձող արուեստին զլիա-
ւոր վախճանն է, որ և իցէ մետաղ լու-
ծել և ուզած նիւթի մը վրայ նստեցը-
նել, որ երկու կերպ կրնայ ըլլալ. մէյ-
մը այնպէս ընելով որ երթայ կաղապա-
րին ամէն կողմը նստի և անոր ճիշդ
ձևը առնէ, բայց առանց ամենեւին ա-
նոր հետ միանալու, այնպէս որ կարե-
նայ մարդ ուզած ատեն կաղապարին վը-
րայէն զանիկայ բաժնել, իբրև թէ
անոր վրայ ձուլած թափած ըլլար. և

ասկէ կ'առնու այս արուեստս իր կա-
վանայն անունը: Իսկ երկրորդ կերպը
որ երթայ մետաղը կաղապարին վրայ
նստի և անոր հետ անբաժանելի կեր-
պով կապուի միանայ, որ ճիշդ խօսե-
լով կարվանսաձող չըսուիր. հապա կերպ
մը մետաղազօծումն ելեքտրութեան
ձեռքով եղած, որ կրնայ աւելի կալը-
նազօծումն ըսուիլ: Այդ այս երկու կեր-
պիս համար ալ կրնանք թէ Պարզ և թէ
Ինքնադրեալ ըսուած կազմարանները
գործածել՝ ելեքտրական հոսանքը ա-
ռաջ բերելու և միանգամայն այդ ար-
հեստը կատարելու համար: Վախ և ա-
ռաջ մենք ասոնց ստորագրութիւնը ը-
նենք, որ կարենանք բացայայտ իմանալ
ասոնց իրարմէ ունեցած զանազանու-
թիւնը:

2. Պարզ կազմարան. — Պարզ կազ-
մարաններուն մէջ ամենէն աւելի գոր-
ծածականն է 1 Չեյն մէջ դրածնիս:

Ձև 1.



Վրսի Ա ապակի կամ
յախճապակի մեծ անօ-
թին մէջ զիր մէկ ուրիշ
Ս աման մը աւելի նեղ
տրամագծով և ծակոտ-
կէն նիւթէ, ինչպէս է
չապիկած հողը կամ չե-
փած յախճապակին:
Այն անօթին մէջ լե-
ցուր ուզած յարմար մե-
տաղը լուծուած բայց յագեալ¹, որ են-

1 Որովհետև այս յօդուածներուն մէջ շատ ան-
գամ հարկ պիտի ըլլայ գործածել Յօդուած 1-
Թ-Թ, Բի-Բեղադ-Գ-Գ բառերը, և ասոնցմէ ե-
լածները, անոր համար հարկաւոր կը սեպենք
ասոնց վրայ համառօտ տեղեկութիւն մը տալ: —
1-Թ-Թ-Թ կ'ըսուի այն մարմինը որ հեղանիւթի
մէջ իր մասնակցութենէն քայքայելով՝ աչքէ կը
կորսուի, առանց հեղանիւթին թափանցկութիւ-
նը այլայլելու. և վերջը հեղանիւթը ցնդելով՝
նորէն իրեն առջի վիճակը կը գառնայ. ինչպէս է
ըսենք՝ սովորական աղը, շաքարը, և այլն: Եւ իրեն
այդ հեղուկ վիճակը՝ 1-Թ-Թ-Թ կ'ըսուի: Բայց թէ
որ այդ լուծանելի մարմինը կամ հեղանիւթը իրեն
բնաբանական կամ բնալուծական յատկութիւննե-
րը կորսնցընէ, այն ատեն Տարա-Թ-Թ կ'ըսուի.
վասն զի իրեն բաղկացուցիչ մասնակցներ իրարմէ
կը զատուին: Իսկ այն մարմինները որ հեղանիւթը
կը պղտորեն միայն, և կ'երթան տակը գիրտի պէս
կը նստին առանց փոխուելու, Ա-Թ-Թ-Թ կ'ը-
սուին: Երբոր լուծող մարմինը այնչափի հա-

1 Տեմպեայ հովանի վրայ ուրիշ անգամ խօսած
ենք Բազմավիպիս մէջ. հտ. ԺԱ. էջ 334:

2 Գլ. Appareils Galvaniques.